ՀՏԴ 329(479.25):336.563:94(4)"1914/19"

Ա.Ս. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐԵԻՆ

Դիտարկվում են հայ քաղաքական կուսակցությունների ֆինանսական հնարավորությունները Եղեռնի նախօրեին, վեր է հանվում այդ նյութական միջոցները զենքի ձեռքբերման խնդրին ծառայեցնելու իրական պատկերը:

Առանցքային բառեր. հանգանակություն, բռնի հանգանակություն, ֆինանսական հաշվետվություն, զենքի ձեռքբերում, ֆինանսական կայունություն, նյութական միջոցների բաշխում, ինքապաշտպանության խնդիր:

Բոլոր ժամանակներում կուսակցությունների պատմությունն ուսումնասիրելիս կարևոր նշանակություն ունի նրանց ֆինանսավորման աղբյուրների, բաշխման խնդիրների պարզաբանումը: Առաջին աշխարհամարտի նախօրեին այս խնդիրն առավել կարևորվում էր ինքնապաշտպանության համար զենքի ձեռքբերման հրատապությամբ և հրամայականով: Նշված փուլում զինման խնդիրը պարզաբանելու համար կարևոր է նյութական աղբյուրների ձեռքբերման անհրաժեշտության ու իրական հնարավորությունների վերլուծությունը:

Մինչ ֆինանսավորման խնդրին անդրադառնալը, սակայն, նախ անդրադառնանք դրա նշանակությանն ու նախապատմությանը:

Հայ ազգային -ազատագրական շարժման ֆինանսավորումը ուղղակիորեն կապված է այդ պայքարի արդյունքի հետ: Ֆինանսավորման խնդրի լուծումը և նյութական միջոցների առկայությունը հիմք են հանդիսանում զենքի ձեռքբերման, կենտրոնացման և արյունավետ պայքարի ծավալման համար: Այդ պայքարի ղեկավարությունը ստանձնեցին ասպարեզ եկած հայ քաղաքական կուսակցությունները: Նրանցից յուրաքանչյուրը մշակեց պայքարի իր մարտավարությունը՝ կարևորելով նյութական միջոցների առկայության կամ ձեռքբերման խնդիրը:

Ազգային կուսակցությունների ֆինանսավորման աղբյուրները պայմանականորեն կարելի է բաժանել ներքինի և արտաքինի: Վերջինս ի սպառ բացակայել է՝ քաղաքական շահերի բախման և անբարենպաստ դրության հետևանքով: Կուսակցության ներքին ֆինանսական աղբյուրն անդամավճարներն էին և գերակշռող մաս կազմող հանգանակությունները:

Սկզբում՝ 1890-ական թթ. , հանգանակությունը կամավոր բնույթ էր կրում: Հայ անդրանիկ՝ Արմենական կուսակցության ներսում ձևավորվել էին, այսպես

կոչված, «դրամական խմբեր»: Այս խմբերը բաղկացած էին գյուղացիներից, ովքեր, որպես կանոն բարոյապես մաքուր և վստահելի մարդկանց համբավ ունեին շրջապատում: Դրամական խմբերի անդամները պարտավորվում էին միայն կամավոր սկզբունքով տուրք մուծել զենք ու զինամթերքի գնման համար: Քիչ չէին դեպքերը, երբ մի ամբողջ գյուղ անդամագրվում և իր դրամական աջակցությունն էր ցուցաբերում:

Աստիճանաբար, սակայն, հայոց ազատագրական պայքարում նկատվում են կամավոր հանգանակության նվազման դեպքեր. սկսվում է մի նոր շրջան, երբ կուսակցական գործիչները (Հ. Յ. Դ և Հնչակյան) որդեգրում են հայ մեծահարուստներին սպառնալու, ահաբեկելու ճանապարհով նրանցից նյութական միջոցներ հավաքելու գործելակերպ: Ուշագրավ է, որ հայ մեծահարուստները սկսում են չպատկերացնել իրենց ֆինանսական միջոցների դերն ու նշանակությունը հայ ազատագրական պայքարի դրական ելքի գործում: Այսպես սկսվում է բռնի հանգանակության շրջանը, որից ստացված ֆինանսական միջոցներն ուղղվում են զենքի ձեռքբերման աշխատանքներին [1]: Բռնի հանգանակության անհրաժեշտությունն առաջացավ 1895 թ. , երբ համաձայն պատմագիտական սահմանափակ տվյալների՝ հնչակյան գործիչներն առաջինը դիմեցին բռնի հանգանակության:

1908 թ. ինչպես զինման, այնպես էլ ֆինանսավորման խնդիրը կուսակցությունների համար դադարում է օրակարգային հարց լինելուց: Բնականաբար, սահմանադրական շրջանում, ինչպես արդեն նշել ենք, մարտավարության փոփոխմանը զուգահեռ փոխվում է վերաբերմունքը նաև այս խնդիրների վերաբերյալ: Առանձին վայրերում առանձին գործիչների նախաձեռնությամբ միայն քայլեր իրականացվում են զենքի ձեռքբերման ուղղությամբ, որը, բնական է, պահանջում էր որոշակի ֆինանասական հնարավորությունների առկայություն:

Պետք է նշել, որ սահմանադրական շրջանում անգամ հայ մեծահարուստները հրաժարվում էին միջոցներ տրամադրել զենքի ձեռքբերման համար: Ասվածի լավագույն ապացույցը 1910 թ. Ուրֆայում ձևավորված Զինվորական ֆոնդն էր, որի նպատակը նյութական միջոցների հայթայթումն ու զենքի ձեռքբերումն ապահովելն էր: Նյութական միջոցների սղության պատճառով հնարավոր չէր խնդիրն ամբողջությամբ լուծել, մյուս կողմից էլ՝ «… հարուստ դասը, յեղափոխական գործերու օգնելու տրամադրութիւն չունէր, մանավանդ Սահմանադրութեան նախօրեակին կը կարծեին թե զինուել ինչի համար, որու համար: Լաւ զենքի մը գինը ընտանիքի մը տարեկան ապրուստն էր, ուստի միամտութիւն պիտի ըլլար այդ պայմաններուն մեջ զինաւորումը դարձնել ընդհանուր» [2]:

Ստացվում է, որ մեծահարուստներն ի սկզբանե հրաժարվում են մասնակցություն ցուցաբերելուց այդ ազգանվեր գործին, նախընտրում՝ միջոցներ կուտակել և հետագայում այդ ճանապարհով պահպանել և՛ կուտակած հարստությունը, և՛ կյանքը: Բնական է, որ այս մտայնությունը իրականության հետ չէր համընկնում, և կարճ ժամանակ անց կուտակած այդ հարստությունը բռնագրավվեց թուրքական իշխանությունների կողմից, որից հետո կյանքի ապահովության մասին խոսք անգամ լինել չէր կարող:

Բռնի հանգանակության անհրաժեշտության խնդիրը շարունակվում է նաև պատերազմի սպառնալիքի պայմաններում: Այդ խնդրով մտահոգվող կուսակցություններից Հնչակյան կուսակցության գործիչ Ս. Սապահ Գյուլյանը ներկայացնում է վերլուծություններ սահմանադրական շրջանում հանգանակության խնդրի վերաբերյալ: Այսպես, 1910 թ. հանգանակության և զենքի ձեռքբերման քննարկումներից մեկի արդյունքում հնչակյան գործիչը եզրակացնում է. «Հայ էֆենդիներ զենքի ինքնապաշտպանության հակառակ էին, դրամ չէին տալիս. պատիվ, գույք, հարստություն կորցրին. բայց խնայեցա՞վ իրենց կեանքնին…այս է ամբողջ խնդիրը» [3]:

Փորձենք, սակայն, այս խնդիրների պատճառները գտնել, հասկանալ, ո՞րն էր նման հոգեբանության հիմքը:

Ներկայացնենք մեծահարուստներից մեկի դժգոհությունը հերթական ժողով-քննարկման ժամանակ. «Հավաքեցինք և հատկացրինք պահանջված հազար ոսկին, անգամ դրանից ավելին: Այս հատկացումը տրվեց Հնչակյաններին, բայց սկսվեց ներքին հակամարտություն Դաշնակցության և Հնչակյան անդամների միջև. յուրաքանչյուրը ձգտում էր նախաձեռնողի և հանգանակվող գումարի տերը լինել: Մենք որոշեցինք կամ հատկացնել երկու կուսակցություններին էլ, կամ ոչ մեկին: Այսպես ցրվեցինք» [4]:

Նման դեպքերի կարելի էր հանդիպել և՛ 1911թ., և՛ 1912 թ.: Պարզ է, որ հնչակյան կուսակցական գործիչը կունենար իր սուբյեկտիվ վերաբերմունք և իրադարձությունները կներկայացներ հակադաշնակցական հողի վրա, սակայն այդ վերաբերմունքը հաշվի առնելով, պետք է նշենք, որ կուսակցական պառակտվածությունը ինչ-որ չափով ունեցել է իր կարևոր ազդեցությունը, և նրանցից յուրաքանչյուրի իր կողմը գրավելու, իր գաղափարին հաղորդակից դարձնելու ցանկացած քայլ և ընդհանրապես գործելակերպ իր սուր ծայրով ուղղված էր արևմտահայ միջավայրում միասնական և արդյունավետ գործունեության կազմակերպմանը: Նման միջավայրում, բնական է, որ հայ մեծահարուստը քաղաքական այս կամ այն կուսակցության խոստումներին այլևս չէր հավատա, չէր գնա նրա մշակած

մարտավարության ճանապարհով, մանավանդ որ վերջիններիս գործողությունները և անցած գործելակերպը հավատ չէին ներշնչում:

Այս և նման այլ խնդիրների կողքին կար նաև մեկ այլ մտահոգիչ փաստ: Սահմանադրական շրջանում նախկին հեղափոխական գործիչներից շատ քչերն էին «ազատագրական պայքարի» հրապարակում հանդես գալիս: Նրանց մի մասը կամ ձերբակալվել էին, կամ անցել Արևելյան Հայաստան, այսինքն դուրս եկել Օսմանյան կայսրության տարածքից: Սահմանադրական կարգերի հաստատումից հետո, իհարկե, նրանց մի մասը՝ Արամ Մանուկյան, Սեբաստացի Մուրադ և այլք, վերադառնում են, և յուրաքանչյուրն իր կարողության չափով ներդրումն ունենում հետագա ինքնապաշտպանության գործում:

Այսուհանդերձ, կատարվում է ղեկավար կամ կազմակերպիչ գործիչների շրջանում որակական փոփոխություն, գործողություններն ու «պայքարի» ղեկավարությունն ստանձնում էին հեղափոխության հետ կապ չունեցող գործիչներ. նախկին դավաճանները ներկայանում են «իսկական հեղափոխականի» կերպարով:

Այսպիսով, «ազնիվ հեղափոխականի» խեղաթյուրումով, կուսակցությունների պառակտված գործելակերպով, ինչպես նաև Սահմանադրական կարգերի հաստատմամբ ու երիտթուրքերի խոստումներով պայմանավորված՝ հայ մեծահարուստները նյութական աջակցություն չցուցաբերեցին ազատագրական պայքարին: Սա, իհարկե, հիմք չի հանդիսանում արդարացնելու համար հայ մեծահարուստի անտարբեր վերաբերմունքը, բայց, մեր կարծիքով, դրան նպաստող գործոններից մեկն է:

Անդրադառնանք նյութական ռեսուրսների բացակայության խնդրին և այն հավաստիացումներին, թե արևմտահայությունը նյութական միջոցներ չուներ ազատագրկան շարմժանն աջակցելու համար:

Ա. Դարբինյանի համոզմամբ, օրինակ, Վանում և մյուս վայրերում. «եթէ նիւթական միջոցները աւելի թոյլատու ըլլային, համեմատաբար աւելի դիւրութեամբ կարելի կլիներ զինել ժողովուրդը, քանզի մաքսանենգութիւնը դիւրացած էր անպաշտոն կերպով զենքի վաճառում կը կատարուեր Վանի շուկայէն մեջ, թե՛ թուրքերու, թե՛ քիւրտերու, թե՛ հայերու մեջ կային զենքի վաճառումով զբաղուող առեւտրականներ» [5]:

Բայց հակադարձենք այս տեղեկությանը և ընդհանրապես այն բոլոր պնդումներին, որոնք զենքի ձեռքբերումը և զինումը անմիջականորեն կապում էին միջոցների բացակայության հետ:

Համաձայն Լեփսիուսի «Գաղտնի տեղեկագրի» տվյալների՝ Մին գյուղ-ի (ք. Կարին) բնակիչները 1914-1915 թթ. թուրք ոստիկանին են տալիս 7000 ոսկի, Սեբաստիայի վիլայեթից Թոքատի հայերը թուրք մյութեսարիֆին տվեցին 1600

ոսկի, Տիգրանակերտի վիլայեթից՝ 6000 ոսկի և այլն: Հարց է առաջանում ո՞ր-տեղից այդ միջոցները, կամ եթե նման միջոցներ կային, արդյո՞ք հնարավոր չէր դրանք ուղղել զենքի ձեռքբերմանն, այլ ոչ թե տալ թուրք ոճրագործներին, հետո սպանվել վերջիններիս ձեռքով: Այս և նման այլ տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ, այնուամենայնիվ, խնդիրն ավելի խորքային է ու լուրջ նրբություններ ունի[6]:Այս առումով բերենք մեկ այլ տեղեկություն ևս. Վ. Փափազյանը 1914 թ. իր դաշնակցական ընկերներից կողբեցի Տիգրանի հետ շրջում է Մուշի մի քանի գյուղերում՝ ակտիվ երիասարդներին հավաքելու և վտանգին նախապատրաստվելու նպաակով: Անցնելով Ջրիկ, Ցրոնք, Ավրան, Աղջան և այլ գյուղեր՝ Փափազյանը ակամայից տվյալներ է հաղորդում այդ գյուղերի ունեցած նյութական հնարավորությունների մասին, որտեղ նշում է. «Մեր անցած բոլոր գյուղերը լի էին առատությամբ. գոմերու մսուրներու երկայնքին կապուած էին շարքերը կովերու, ձիերու և ամեհի գոմեշներու. փարախները՝ ոչխարներու և այծերու հոտերով լեցուն: Այդ գյուղերը հայ հին նահապետական գիւղեր էին իրենց առատութեամբ ու հիւրասիրութեամբ» [7]:

1914 թ. տվյալներով միայն Բաբերդի ու շրջակա գյուղերի նյութական կորուստը կազմում էր 150000 ոսկի:

Այս տվյալների ներկայացմամբ նպատակ ունենք ևս մեկ անգամ ցույց տալ առանձին վայրերում հայերի ունեցած ֆինանասական ապահովվածության մակարդակը, որը հերքում է միջոցների բացակայության և հնարավորությունների պակասի վերաբերյալ առկա պնդումները:

Այս և նախորդ տվյալներից ելնելով՝ եզրակացնենք, որ արևմտահայությունը, իհարկե, ոչ բոլոր շրջաններում, ունեցել է նյութական ռեսուրսների մեծ պաշար, որը ճիշտ քաղաքականության և կուսակցությունների կողմից կազմակերպված քայլերի դեպքում հնարավոր էր ուղղել արևմտահայերի գոյության պահմանման, վերջիններիս զինելու և զենքի ձեռքբերման նպատակին: Չնայած այս վերլուծությանը՝ մեկ անգամ ևս կրկնենք, որ խնդիրները ավելի խորքային էին և դժվարություններ այս առումով ևս կային, բայց վերոնշյալ «բացթողումների» բացառմամբ հնարավոր կլիներ գոնե մեղմել հետագայում արևմտահայերի ոչնչացման մասշտաբները: Ասվածի օրինակներն ու ապացույցն են առանձին ինքնապաշտպանական մարտերը՝ իրենց լավ թե վատ արդյունքներով: Վերջին հանգամանքը նույնպես կախված էր ֆինանսավորում-զինում աշխատանքների համակարգված կատարման և արդյունավետության մակարդակից:

Ֆինանսավորման հնարավոր աղբյուրներն ու չափը հասկանալու համար արդյունավետ ենք համարում կուսակցական առանձին ժողովներում համապատասխան ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը:

Այսպես, 1909 թ. օգոստոսի 14-ից սեպտեմբերի 18-ը Վառնայում գումարվեց Հ.Յ.Դաշնակցություն կուսակցության հինգերորդ ընդհանուր ժողովը[8]: Օրակարգում դրվում են հետևյալ հարցերը.

ա. Հանգանակություն և տուրքի կանոնակարգում.

բ. Ծախսերի սահմանափակում, բոլոր մարմինների հաշվետվություն.

գ. Նախահաշիվ-մուտքի աղբյուրներ, դրամական անձեռնմխելի միջոցներ.

դ. Հանգանակության ձևի խնդիր՝բռնի՞, թե՞ կամավոր:

Կուսակցության Ամերիկյան և Արևմտյան բյուրոյի հաշվետվության համաձայն՝ տարեկան հասույթը կազմում էր 77 հազ. ֆրանկ, որից 42 հազ. ֆրանկը տրամադրվել էր ընթացիկ ծախսերին:

Համաձայն հաշվետվության՝ առաջիկայում ստացվելիք գումարը կազմելու էր 259 հազ. ֆրանկ, որից 125 հազ. ուղարկվելու էր կենտրոնական դրամարկղ, իսկ 149 հազ.՝ ուղղվելու էր շրջանային խնդիրների լուծմանը[9]: Այս չափը զգալիորեն կրճատվում է, քանի որ սպասվելիք գումարը համալրվելու էր հանգանակությունների հաշվին նաև: Ելքի գումարը 1911 թ. դրությամբ գերազանցել է նախատեսված շեմը՝ «Դրոշակի» խմբագրության և Արևմտյան բյուրոյի հատկացումների արդյունքում: Ուշագրավ է, որ արդեն վեցերորդ ժողովի ժամանակ բյուջեի բախշման դեպքում կարևորվում են ինքնապաշտպանության խնդրի կազմակերպմանն ուղղված ֆինանսական հատկացումները: Կուսակցությունը բավականին միջոցներ հատկացնում նաև պրոպանգադային. այսպես շուրջ 12 հազ. ֆրանկ տրվում է Դրոշակի խմբագրությանը, ավելին, քան, ասենք, Արևմտյան բյուրոյինն էր (45 հազ. ղուրուշ=10 հազ ֆրանկ): Այսինքն, ստացվում է, որ այս սուղ ֆինանսական պայմաններում կուսակցությունը շարունակում է կարևորել պաշտոնաթերթի հրատարակման և խմբագրության հետ կապված այլ խնդիրներ[10]:

Հ. Յ. Դաշնակցության ֆինանսական հաշվետվություններից զատ՝ ուշադրություն դարձնենք ֆինանսական միջոցներին և դրանց նպատակային ուղղվածության հարցին: Բերենք մի քանի օրինակ կուսակցության նիստերի արձանագրությունների ֆինանսական և կազմակերպական բաժիններից: Այսպես, յոթերորդ ընդհանուր ժողովի արձանագրության մեջ անդրադարձ է կատարվում հանգանակության խնդրին և ասվում է, որ արտասահմանում ինքնապաշտպանության անվան տակ մի քանի գործիչներ հանգանակություն են կազմակերպել և յուրացրել, ստացված արդյունքներից կուսակցությունը տեղյակ չէ: Սա մի խնդիր: Ներկայացնենք նաև կուսակցության ֆինանսական միջոցների ցանկը և փորձենք վերլուծել այդ միջոցները՝ ըստ Օսմանյան կայսրության տարածքում կուսակցության ունեցած տվյալների:

Հ. Յ. Դաշնակցության Տրապիզոնի մասնաճյուղի նյութական ապահովվածության մակարդակը 1912-13 թթ. հնարավորություն է տալիս ասելու, որ շրջանը իրական հնարավորություններ ուներ ինքնապաշտպանության ճանապարհով տեղի հայության անվտանգությունը ապահովելու: Խնդիրն այն է, որ շրջանը բավական բարձր ցուցանիշներ ուներ հանգանակությունների արդյունքում: Առկա ցուցակի տվյալների համաձայն՝ ընդհանուր գումարի չափը դեռ 1912 թ. դրությամբ կազմում էր 514 ոսկի:

Այսինքն՝ մինչև հայերի զանգվածային կոտորածների շրջանը զենքի խնդիրը լուծելու կամ այդ ուղղությամբ աշխատանքներ իրականացնելու լայն հնարավորություններ կային: Իհարկե, շրջանային ժողովներում ընդունվել են որոշումներ ինքնապաշտպանության գործի կազմակերպման ուղղությամբ, ծավալվել են քննարկումներ, սակայն դրանք գործնական տեսանկյունից բավականին անարդյունավետ էին:

Լեռնասարի կամ Խարբերդի կուսակցական կոմիտեի որոշմամբ (1913 թ.) կազմվում է ինքնապաշտպանական կոմիտե, որը զբաղվելու էր հանգանակությունների և դրանք գործին ծառայեցնելու խնդրով:

Խարբերդի կոմիտեն, այնուամենայնիվ, նյութական միջոցների լուրջ կարիք ունենալով, չի կարողացել դրամ ձեռք բերել: Հատկացումներ եղել են միայն ամերիկյան մասնաճյուղից՝ 150 ոսկի, որն ուղղվել է շրջանի ինքնազարգացումն ապահովելու համար: Այսպիսով՝ Խարբերդի շրջանն ավելի սակավ նյութական միջոցներ է ունեցել:

Վիշապաձորի կամ Տիգրանակերտի կոմիտեի վերաբերյալ սահմանափակ նյութեր կան: Դրանք առնչվում են տեղի ինքնապաշտպանական կոմիտեի կողմից Հ. Յ. Դաշնակցության կենտրոնական կոմիտեին ուղղված դիմումներով: Այստեղ, ինչպես նաև Սեբաստիայում, 1908-1909 թթ. կազմակերպական աշխատանքներով հանդես է եկել Սեբաստացի Մուրադը: Մ. Վարանդյանն այսպես է ներկայացնում վերջինիս գործունեությունը. «Մուրադ իսկական ռազմավար էր, որովհետև ան ոտքը դրած վայրին մէջ առաջին անգամ ինքնապաշտպանութեան դիրքեր կը որոներ ու կը քներ: Նա առանց բացառութեան ամէն խումբի այցելեց, խոսեցաւ եւ քաջալերեց...»[10]:

Ֆինանսական դժվարությունների հաղթահարման և դրանք արևմտահայերի ինքնապաշտպանությանը ծառայեցնելու խնդիրը գոնե 1913 թ. տվյալներով բարձրացվել, քննարկվել և ներկայացվել էր կենտրոնական կոմիտեին: Այլ հարց է, թե որքանով հնարավոր եղավ ուշ սկսված աշխատանքը ամբողջությամբ ավարտին հասնել: Այս առումով Ա. Մանուկյանի հաղորդմամբ կան տվյալներ Վանում, դեռևս 1910 թ., հանգանակված գումարի չափի և դրա նպատակային օգտագործման

մասին[11]: Այսինքն՝ գործընթացը սկսվել է ավելի վաղ, ցավոք, դա համատարած բնույթ չի կրել՝ սահմանափակվելով առանձին շրջաններով:

Այսուհանդերձ, մեկ անգամ նշենք, որ կազմակերպչական աշխատանքում արդյունավետությունը կախված էր առանձին վայրերում առանձին գործիչների վարած քաղաքականությունից և իրականացված աշխատանքի արդյունավետությունից: Այս դեպքում, սակայն, չպետք է մոռանալ մի կարևոր հանգամանք, այն է՝ Առաջին աշխարհամարտի տարիներին ռուսական բանակի և հայ կամավորական ջոկատների առաջխաղացման հնարավորությունները, և հայերի՝ դրա հետ կապված մեծ հույսերը:

Ինչ վերաբերվում է Հնչակյան կուսակցության ֆինանսական միջոցներին, ապա լավագույն ամենապարզ տարբերակը մասնաճյուղի օրինակով իրողությունը ներկայացնելն է. ճիշտ է, խնդիր ունենք ներկայացնելու կուսակցությունների քայլերը Օսմանյան կայսրության տարածքում, բայց այժմ ներկայացնենք կուսակցության կարևոր մասնաճյուղերից մեկի՝ ամերիկյան մասնաճյուղի գործելակերպի և նյութական միջոցների կազմակերպման ընթացքը[12]: Հնչակյան ամերիկյան մասնաճյուղը հրավիրված նիստերում դեռևս 1911 թ. կարևորում է արևմտահայերի ինքնապաշտպանությանը ֆինանսական միջոցների՝ հանգանակության խնդրին աջակցելը: Արդյունքում ունենք բավական տվյալներ հանգանակությունների և հատկացված ֆինանսական միոցների վերաբերյալ, որոնք ուղղվում էին տեղում կուսակցական թերթի՝ «Երիտասարդ Հայաստան»-ի հրատարակմանը[13]:

Ստացվում է, մասնաճյուղի օրինակով, կարևորվում էր ոչ թե արևմտահայերին նյութական աջակցություն ցուցաբերելը, այլ կուսակցական գաղափարների քարոզչությունը: Նյութական աջակցության խնդիրը միայն արտացոլվում էր շրջաբերականներում և արձանագրությունների որոշումներում, իսկ դրանք գործողության վերածելու համար էական քայլեր չէին իրականացվում:

Այսպիսով, նույնիսկ մասնաճյուղերից ֆինանսական որևէ աջակցություն, զինման և ինքնապաշտպանության գործի աջակցության նպատակով, կուսակցությունը չի ստանում: Ամերիկյան մասնաճյուղը, անշուշտ, կունենար իր նյութական ապահովվածության խնդիրը, բայց այդ օրերին արևմտահայերի անվտանգության հարցը պիտի վեր դասվեր ցանկացած թերթի հրատարակման անհրաժեշտությունից և գնահատվեր իր ողջ կարևորությամբ ու հնարավորություններով:

Զինման և ֆինանսավորման խնդրի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ.

Ա. Արևմտահայությունն ունեցել է բավական կայուն ֆինանսական վիճակ նախապատերազմյան շրջանում, այլ բան է, որ այդ կայունությունը չծառայեցվեց սեփական անվտանգության ապահովման խնդրի լուծմանը:

Բ. Հայ քաղաքական կուսակցությունների գործելակերպի արդյունքում մեծահարուստների դասը հրաժարվեց հանգանակություններով արևմտահայության զինման աշխատանքներին աջակցել՝ դա հմարելովանօգուտ աշխատանք: Մյուս կողմից՝ տեղի ունեցավ ղեկավար կամ կազմակերպիչ գործիչների շրջանում որակական փոփոխություն, գործողություններն ու «պայքարի» ղեկավարությունն ստանձնեցին հեղափոխության հետ կապ չունեցող գործիչներ. նախկին դավաճանները ներկայացան «իսկական հեղափոխականի» կերպարով:

Գ. Կուսակցությունները կարևորեցին արևմտահայության զինման, նյութական միջոցների տրամադրման խնդիրը, բայց լուրջ քայլեր իրականացվեցին միայն վտանգի նախօրեին. մեծաքանակ գումարներ տրամադրվեցին կուսակցական թերթերի հրատարակումներին, հաշվի չառնելով օրակարգային խնդիրը. այն է՝ ապահովել արևմտահայության ֆիզիկական գոյությունը, ոչ թե կարևորել կուսակցական գաղափարական քարոզչությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Գրիգորյան Հ**. Հայոց ազատամարտի զինման և ֆինանսավորման խնդիրը (1890-1908).- Ե. , 2004, էջ 43:
2. **Հիսայեան Յ.** Դիւցազնական հայորդին, Մկրտիչ Եօթնեղբարեան- Աթէնք, 1937, էջ 25:
3. **Սապահ-Գիլեան Ս.** Պատասխանատուները.- Պէյրութ, /Դոնիգեան և որդիներ հրատ. /, 1974, էջ 36 :
4. Նույն տեղում, էջ 67:
5. **Դարբինեան Ա.** Հայ ազատագրական շարժման օրերէն- Փարիզ, Ա. հ, 1947, էջ 242:
6. **Լեփսիուս Յ.** Գաղտնի Տեղեկագիր. Հայաստանի ջարդերը.- Կ. Պոլիս, /տպ. Յ. Ասատուրեան եւ որդիք/, 1919, էջ 67:
7. **Փափազեան Վ (Կոմս).** Իմ յուշերը, հատ. . Բ.- Պոսթըն, /հրատ. Հայրենիքի/ 1952, էջ 319:
8. **Նիւթեր**. . . հատ. Զ, հատ. Ը.- Պէյրութ, 2011, էջ 100, , հատ. ԺԱ (խմբ. Փամբուքեան Ե.), Պէյրութ, 2015, 448 էջ:
9. **Նիւթեր**.. հ. Ժ. (խմբ. Փամբուքեան Ե.).-Պէյրութ, 2014, էջ 48:
10. **Վարանդեան Մ.** Մուրատ.Պոսթըն, /հրատ. Մուրատ ֆոնդի կեդրոնական վարչ./, 1931, էջ 144 :
11. **Արամ Մանուկեան:** Նամականի (կազմող՝ Փամբուքեան Ե.).- Ե. , /ԵՊՀ հրատ. /, 2018, էջ 557 :
12. ՀԱԱ, ֆ. 408, g. 1, գ. 87, թ. 1:
13. ՀԱԱ, ֆ. 408, գ. 89, թ. 2:

А.С. ТАДЕВОСЯН

ПРОБЛЕМА ФИНАНСИРОВАНИЯ АРМЯНСКИХ ПОЛИТИЧЕСКИХ ПАРТИЙ НАКАНУНЕ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

При изучении истории партий всех времен важно выяснить источники их финансирования и вопросы распределения. Эта проблема имела важное значение накануне Первой мировой войны при получении оружия в целях самообороны.

Целью данной статьи является выяснение финансовых возможностей армянских политических партий накануне Геноцида, анализ и раскрытие реальной картины использования этих финансовых средств для приобретения оружия.

Ключевые слова: сбор пожертвований, насильственный сбор пожертвований, финансовый отчет, приобретение оружия, финансовая стабильность, распределение ресурсов, проблема самообороны.

A.S. TADEVOSYAN

PROBLEM OF FINANCING OF ARMENIANS POLITICAL PARTIES ON THE EVE OF THE FIRST WORLD WAR

When studying the history of parties at all times, it is important to clarify their financing sources and distribution issues. The problem was of great significance on the eve of World War I at aquiring weapon for the purpose of self-defense.

The aim of this article is to clarify the financial opportunities of the Armenian political parties on the eve of the Genocide, to analyze and reveal the real picture of the use of these financial means to acquire weapon.

Keywords: donation, violent donation, financial report, aquiring weapon, financial stability, distribution of material resources, problem of self-defense.

ՀՏԴ 330.101:338.24.021.8

Մ.Կ. ԱՂԱՅԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՅԻՑ ՄՈԴԵՌՆԱՑՄԱՆՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Դիտարկվում են տնտեսության տրանսֆորմացիա և մոդեռնացում հասկացությունները, առանձնացվում են տրանսֆորմացիայից մոդեռնացմանն անցման նախադրյալները և տնտեսության մոդեռնացման գործընթացի բաղադրիչները: Տնտեսության տրանսֆորմացիայից մոդեռնացմանն անցումը նշանակում է պետության պատասխանատվության շրջանակների ընդլայնում, ինչն էլ իր հերթին ենթադրում է ինովացիոն ինստիտուցիոնալ միջավայրի ստեղծում:

Առանցքային բառեր. տրանսֆորմացիա, մոդեռնացում, ազգային տնտեսություն, ինստիտուտ, ինովացիոն ինստիտուցիոնալ միջավայր, մրցակցություն, պետություն-մասնավոր հատված, համաշխարհային տնտեսություն:

Հետխորհդային երկրների տնտեսական զարգացման ներկայիս փուլը հաճախ ներկայացվում է որպես անցում տնտեսության տրանսֆորմացիայից տնտե-